



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 օգոստոսի 2014 թվականի N 884 - Ն

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑ-
ՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒ-
ԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍ-
ՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 9-Ի N 429 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Միջազգային ֆինանսավորող կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին, ինչպես նաև առաջարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին և համայնքների ղեկավարներին (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար պայմանական պարտավորություններ առաջացնող ծրագրերի

դեպքում) (այսուհետ՝ ծրագրեր իրականացնող մարմիններ) օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների ֆինանսավորմամբ վարկային կամ դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու նախաձեռնություն ցուցաբերելուց առաջ կամ առաջարկություն ստանալու դեպքում, ինչպես նաև համապատասխան ծրագրերի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն և հաշվետվություններ՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգին համապատասխան:

3. Սահմանել որ՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետում նշված փաստաթղթերը հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (համաձայնությամբ) և համայնքի ղեկավարի (համաձայնությամբ) կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ են ներկայացվում նաև այն ծրագրերի համար, որոնց մասով բանակցություններն սկսվել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը և չեն ավարտվել:

2) ծրագրեր իրականացնող մարմինները սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ են ներկայացնում գործող և դեռևս չավարտված, ինչպես նաև այն ծրագրերի համար, որոնց մասով բանակցություններն սկսվել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը, և նոր նախաձեռնությունների համար, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված հաշվետվությունը և տեղեկատվությունը՝ միայն գործող և դեռևս չավարտված ծրագրերի համար, իսկ 10-րդ կետով նախատեսված հաշվետվությունը ներկայացվում է նոր նախաձեռնությունների, ինչպես նաև այն ծրագրերի համար, որոնց մասով բանակցություններն սկսվել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը և չեն ավարտվել:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում մշակել և

Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված հաշվետվություններն ու տեղեկատվությունները ներկայացնելու ձևերը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 9-ի «Վարկային ծրագրերի իրականացման գրասենյակների կողմից վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգի մասին» N 429 որոշման 1-ին կետից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ և» բառերը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. օգոստոսի 28
Երևան



Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող կամ իրականացվելիք ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) մասին տեղեկատվություն ներկայացնելու, գործող ծրագրերի հաշվետվողականության կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հանրապետական գործադիր, տարածքային կառավարման մարմինները, համաձայնության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և համայնքները (այսուհետ՝ ծրագրեր իրականացնող մարմիններ) օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների ֆինանսավորմամբ վարկային և դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու նախաձեռնություն ցուցաբերելուց առաջ կամ նման ծրագրին մասնակցելու վերաբերյալ առաջարկություն ստանալու դեպքում դրա մասին տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին՝ ներկայացնելով՝

1) վարկային և (կամ) դրամաշնորհային ծրագրի մանրամասն նկարագրությունը.

2) ֆինանսավորման նախատեսվող պայմանները (այդ թվում՝ ժամկետների և նախատեսվող տոկոսադրույքի վերաբերյալ).

3) դրա շրջանակներում իրականացվող միջոցառումների պլան-ժամանակացույցը.

4) տեղեկատվություն ծրագրի իրականացման եղանակների մասին.

5) տեղեկատվություն ծրագրից ակնկալվող արդյունքների մասին.

6) տեղեկատվություն բանակցային և ծրագրի հետագա իրականացման փուլում առկա կամ հնարավոր ռիսկերի մասին.

7) վարկային ծրագրի դեպքում՝ վարկի մարման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի վրա վարկի ազդեցության մասին տեղեկատվությունը.

8) այլ անհրաժեշտ տեղեկատվություն (դիմողի հայեցողությամբ):

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում մուտքագրվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ, ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ծրագրով նախատեսված ոլորտը համակարգող պետական մարմին՝ կարծիքի:

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, իսկ այլ մարմին ներկայացված լինելու դեպքում՝ նաև ծրագրով նախատեսված ոլորտը համակարգող պետական մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են սույն կարգի 2-րդ կետում նշված փաստաթղթերը և կարծիքը ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը կարծիքներն ստանալուց հետո ամփոփում է դրանք և ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետին, ով հանձնարարականներ է տալիս ներկայացված ծրագրին մասնակցելու գործընթացը շարունակելու, որոշակի պայմաններով շարունակելու կամ դադարեցնելու մասին:

6. Ներկայացված ծրագրին մասնակցելու գործընթացը շարունակելու կամ որոշակի պայմաններով շարունակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականն ստանալու դեպքում՝ դիմող պետական մարմինը կարող է սկսել բանակցությունները՝ դրանց ընթացքում սույն կարգի 2-րդ կետով սահմանված տվյալներում էական փոփոխությունների կատարման դեպքում դրա մասին տեղեկատվությունը ներկայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ: Բանակցությունները վարելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ կարող է ստեղծվել աշխատանքային խումբ:

7. Ծրագիրը (համաձայնագրերը, պայմանագրերը) սահմանված կարգով հաստատվելուց կամ վավերացվելուց հետո ծրագիր իրականացնող մարմինը յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացնում հաշվետվություն օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հաստատված ձևի:

8. Ծրագրեր իրականացնող մարմինը յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացնում տեղեկատվություն օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող (նախատեսվող, բանակցային փուլում գտնվող և գործող) ծրագրերի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հաստատված ձևի:

9. Ծրագրեր իրականացնող մարմինը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը, Հայաստանի Հանրապետության

կառավարության աշխատակազմ է ներկայացնում տեղեկատվություն օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հաշվետու տարում կատարված կամ ընթացքում գտնվող, ինչպես նաև կատարվելիք (նախատեսվող) գնումների մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հաստատված ձևի:

10. Ծրագրեր իրականացնող մարմինը յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացնում հաշվետվություն սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պլան-ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հաստատված ձևի:

11. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը յուրաքանչյուր ամիս՝ սույն կարգի 7-րդ, 8-րդ և 10-րդ կետերում նշված հաշվետվությունն ու տեղեկատվությունը, իսկ 9-րդ կետում նշված տեղեկատվությունը՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, բոլոր մարմիններից ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ամփոփում է և ներկայացնում Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

12. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի մոտ յուրաքանչյուր ամիս տեղի են ունենում քննարկումներ ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ, որոնց մասնակցում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչներ, ինչպես նաև կարող են մասնակցել ծրագրերն իրականացնող գրասենյակների (կազմակերպությունների) ղեկավարները (համաձայնությամբ):

13. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարն ամփոփում է քննարկման արդյունքները և դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետին: Հայաստանի Հանրապետության վարչապետը կարող է տալ հանձնարարականներ ներկայացված ծրագրերի իրականացման վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

